ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 2025 թվականի N 829-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 1132-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Անալիտիկ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու, գույք օտարելու և անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» N 1132-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) 7-րդ կետի 5-րդ ենթակետի «բ», «գ», «դ» և «ե» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ. 2-րդ վճարում՝ ոչ ուշ, քան 2025 թվականի ավարտը,

գ. 3-րդ վճարում՝ ոչ ուշ, քան 2026 թվականի ավարտը,

դ. 4-րդ վճարում՝ ոչ ուշ, քան 2027 թվականի ավարտը,

ե. 5-րդ վճարում՝ ոչ ուշ, քան 2028 թվականի ավարտը:»:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում գնորդի հետ կնքել 2024 թվականի հուլիսի 29-ին կնքված թիվ 967-Օ պայմանագրում սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ